Թ. ՏԱՐԻ 2554 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 25 ՀՈՏԻՑ 4384 30 ՅՈՒԼԻՍ 1892 18 ՄՈՒՀԱՄՄԵԴ 1310 ՀԻՆԳՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ

Գալաթիա, Կ. Պոլիս

درعلیه ده غلطه ده آره‌وك غزته‌سی ادارهسنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳՐԻՆ

Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.

ԳԱԺԱՆԵՐԸ ԱՌԱՋԻՆ ԷՋԻՆ

Կ. Պոլսոյ	Ամսեայ	Տարեկան	արծաթ 150
»	»	Վեցամսեայ	» » 75
»	»	Եռամսեայ	» » 40
Օտար երկիրներէ		Տարեկան	Քսան մ. 56
»	»	Վեցամսեայ	» 28
Ընտիր թուղթի վրայ մասնաւոր տպագր		Տարեկան	Օտար. Ոսկի 2
Գաւառաց թղթատարի ծախքը միօրինակ			Դրուշ 50

Խմբագրութեանս ուղղուած նամակ կամ այլ գրութիւն ետ չի տրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, ՅՈՒԼԻՍ 30/11 ՕԳՈՍՏՈՍ 1892

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԼՈՒՍՈՒՄ ԱՄԲՈՒՄԱԿԱՆ ԽՆԴՐՈՑ ՑԼԷՄԻԱՆԻՆ ԵՒ Ի Կ. ՊՈԼԻՍ

(Շարունակութիւն երէկ թիւէն և վերջ.)

ՕՐԻՆԱՒՈՐ ԱՊԱՀԱՋԱՆ

Աւասիկ մին Սինոդի ամուսնական որոշմանց զորս յիշեցինք երէկ։

«Սինօդը պատուիրում է Տփղիսի կոնսիստորիային թոյլ տալ Քարվանսարեցի Շողեր Վարդանեան Աւագեանցին մտնել նոր ամուսնութիւն, իւր այր տակաւանցի Յարութիւն հաշէ Աստուրեանցի 15 տարուց ի վեր անյայտանալու պատճառաւ։»

Այս որոշման վրայ կատարելապէս համաձայն ենք Սինոդին։ Այս տողերը գրողն՝ իւր մասին՝ գոնէ տասն երկու տարիէ հետէ նոյն գաղափարը կը պաշտպանէ, սկսեալ Մասիս օրաթերթէն, և իրմէն յառաջ ալ ուրիշներ պահանջեր են՝ Մշեցի Հայուհեաց ծանօթ աղերսագիրն առիթ առնելով՝ թէ բազում տարիներէ հետէ իրենց այրերուն կողմէ լքեալ կանանց թոյլ տրուի երկրորդ ամուսնութեամբ մը վերակազմել ընտանիքն, իրենց և զաւակներուն պաշտպան մը ձեռնալով, և թող ֆիզիքական պէտքն՝ իրենց դէթ օրապահիկն ապահովելով։

Թէպէտ այս քանի մը դիտողութիւններն ափ յատոյ գրելով նպատակիս ամուսնական խնդիրներու վրայ կանոնաւոր ուսումնասիրութիւն մ'ընել չէ, որուն թերեւս մեր պատմական, աստուածաբանական և իմաստասիրական թերի ծանօթութիւնը ևս բաւական չըլլան, բայց ի հարկին դիւրին է ցոյց տալ մեր եկեղեցական պատմութեամբ թէ նախնի Հարք արտօնած են բազում տարիներէ հետէ լքեալ կանանց կրկնամուսնութիւնն։ Եթէ չենք սխալիր, Շահապիվանի Եկեղեցական ժողովոյն մէջ էր որ եօթն տարիէ հետէ իրենց վրայօք լուր չտուող արանց կիները թոյլատրեցան նորէն կարգուելու, և յայնմհետէ հաղորդակցութեանց անհամեմատ դիւրացումն հաշուի դնելով, բնական է ներկային մէջ ևս սահման մը դնել անտարբեր կամ անյայտ էրիկ մարդոց կիներուն քաջած տառապանքներուն։

* * *

Կանոնիկական առանձնաշնորհ

Աւասիկ Սինոդի մէկ ուրիշ որոշումը։

«Ներքին գործոց նախարարն ուղարկելով Նոր Նախիջեւանցի Թագուհի Իզմայիլեանցի յանուն Նորին Կայսերական Մեծութեան (Զարին) տուած խնդիրը, առաջարկում է Սինոդին տալ բացայայտ տեղեկութիւն նախարարութեան՝ նորապակի լուծումն ուշացնելու մասին։ Որովհետեւ պակի լուծումն իրեւ զուտ հոգեւոր գործ, Սինոդի իրաւասութիւնից վեր է և կախուած Ամենայն Հայոց Կաթուղիկոսի տնօրինութիւնից, այդ պատճառաւ Թագուհի Իզմայիլեանցի իւր այր Թորոս Իզմայիլեանցից անջատուելու խնդիրը թողնել մինչեւ նոր ընտրեալ Հայրապետի գահակալութիւնն, որի համար յայտնեց Ներքին գործոց Նախարարին և տուեց տեղեկութիւն Բեւանդարի Հայոց կոնսիստորիային ծանուցանելու աղերսարկուին։»

Այս որոշումն ևս բանաւոր է։ Երանի թէ այժմեան Սինոդը միշտ այսչափ իմաստութեամբ պահպանողական երեւէր։ Քիչ մը եռքը պիտի տեսնենք, դժբախտաբար, թէ երբեմն արտակարգ չեղումներ ունի Սինոդի պահպանողականութիւնը։ Պակի լուծումը զուտ հոգեւոր գործ մ'է, և նոյն իսկ Պալատենական որ եկեղեցական օրէնսդրութեան կատարելութիւնը լինելէ հետի է՝ զուտ հոգեւոր գործերը կաթողիկոսի իրաւասութեան վերապահելու դէթ սկզբունքն հաստատած է, թէեղէտ գործնականի մէջ չեղումներ ըրած ըլլայ զանազան տրամադրութեամբք։ Կին մը իւր էրիկէն բաժնուիլ կը պահանջէ՝ նորէն ամուսնանալու արտօնութեամբ։ Ա. Զարն աղերսագիր մատուցանելով կը գանգատի թէ խնդրած արտօնութիւնը չի արուիր Սինոդէն։ Ներքին գործոց Նախարարը կը հարցունէ թէ ինչ պատճառ կայ կինը չդոհացնելու։ Սինոդը մեծ իրաւամբ կը պատասխանէ թէ այդ կնոջ պահանջածը պակի լուծումն է, զոր կաթողիկոսը միայն կրնայ արտօնել, ուստի թող սպասէ կաթողիկոսական ընտրութեան հաստատման, կամ նոր կաթողիկոսի ընտրութեան, ամիս մը կամ աւելի քան տարի մը, ինչպէս որ ըլլայ, բայց վերջապէս կաթողիկոսը միայն կարող է վերջնական վճիռը տալ զուտ հոգեւոր գործի մը վրայ։ Այս պարագայիս մէջ ևս տեսերեւ է որ եկեղեցին կարեւոր իրաւունքներ ձեռքէ չհանելու համար, Սինոդը պարի իւր սահմանէն դուրս չելնել և կաթողիկոսական իրաւանց ասպարէզին մէջ ոտնձգութեան չենթարկուիր։

* * *

Դարպասբրելոց պահն ըստ

Հիմա կուգանք այս որոշմանց կարեւորագոյնին, որ հետեւեալն է։

«Ապարանի Ալիքիւչակ գիւղացի Դաւիթ Ադամեանցը դատապարտած լինելով ամենայն ծանր ոճրագործութեան քսան տարով, Սինոդը թոյլատրում է նորա ամուսնուն՝ Մարթա Պողոսեանին՝ իւր խնդրի համաձայն և ըստ գործութեան 45 և 50 յօդ. ծ. հատոր Ա. մասին օրինաց՝ մտնել նոր ամուսնութիւն։ այս մասին յայտնել յիշեալ Մարթա Պողոսեանցին՝ Ապարանի գործակալի (փոխ-առաջնորդի) միջոցաւ։»

Այս տնօրինութեան ներքեւ սա գաղափար կայ թէ երբ այրն այնպիսի ոճիր մը գործէ որ ընտանեաց ատելութիւն անպատուէ և ինքն ալ Սիպերիա աքսորման դատապարտի երկարամեայ պայմանաժամով կամ ցըկՀանա՝ անոր կինն և զաւակները՝ նոյն բանպատուութեան մասնակից չլինելու համար՝ իրաւունք պէտք է ունենան նոր ընտանիք կազմել, կինն արտօնելով պակը լուծեալ համարելու և նոր ամուսնութիւն կնքելու։

Ֆրանսայի Ամուսնալուծման Օրէնքն ալ կը տրամադրէ թէ երբ այրն անպատուիչ պատժոյ մը դատապարտուի, կինն արտօնեալ է ամուսնալուծում պահանջելու։ Կ'երեւի թէ ռուսական օրէնքն այսպիսի տրամադրութիւն մ'ունի։ որովհետեւ Էջմիածնի Սինոդն իւր դատավճիռը ռուսական օրէնքի մը կը յենու։

Դիւրալի է սակայն որ Ֆրանսա և Ռուսիա ամուսնալուծումն իբրեւ օրինական սկզբունք, իբրեւ կանոնաւոր վիճակ մը կ'ընդունին։ Հայաստանեայց Եկեղեցին իբրեւ օրէնք չընդունիր ամուսնալուծումն, այլ իբրեւ բացառութիւն, իբրեւ անել կացութեան մը բացառիկ դարման, որոյ հարկաւորութիւնը գնահատել և պակը լուծեալ նկատել կաթողիկոսին վերապահեալ իշխանութիւն մ'է։ Հետեւապէս, այս Սիպերականի խնդրոյն մէջ, ոչ այնքան ընդհանուր սկզբունքի մը պիտի հետեւինք որքան խնդրոյն մասնաւոր պարագայները նկատենք թէ իրօք ամուսնալուծումը միա՞ն ելքն էր կրկնամուսնութիւն խնդրող կնոջ համար։

* * *

Եւ նախ, ամեն անոնց հետ որք ամուսնալուծումն իբրեւ վարդապետութիւն, իբրեւ որոշ դրութիւն չեն ընդունիր, Հայաստանեայց Եկեղեցին ալ սա պատուական և աւետարանական սկզբունքն ունի թէ ամուսնութիւնը լոկ վայելքի, հաճոյքի ընկերակցութիւն մը չէ։ Ամուսնութիւնը մարդկային սեռին կատարելագոյն վիճակն է, յորում հոգեր, վիշտեր, նեղութիւններ ալ կրնան պատահիլ, զորս այր և կին միասին քաշելու պարտաւոր են, և առ այդ յանձնառու են այն սրբազան խոստմամբ զոր կ'ընեն պակի ժամուն։ Այրը կրնայ մասնուիլ անբուժելի հիւանդութեան մը, որ ամուսնութիւնը ֆիզիքապէս վերջացնէ։ Այս բան ոչ մէկ օրէնքով կ'արտօնէ կինը պակի նուիրական կապը խզելու, և երկրորդ ամուսնութիւն մը կնքելու, կամ անհաւատարիմ ըլլալու։ Եթէ կինն ալ նմանօրինակ տխուր պարագայի մէջ գտնուի, այրը չարտօնուիր նոր ընտանիք կազմելու։ Իսրայէլական հին օրէնքն այլերը կ'արտօնէր երկրորդ կին առնուլ եթէ առաջինն անզաւակ մնար։ բայց ոչ մէկ քրիստոնեայ Եկեղեցի, ոչ մէկ քրիստոնեայ կառավարութիւն ընդունած է այս տրամադրութիւն։ Դժբախտութիւն կրնայ գալ երկան դլխուն, առանց ընտանեաց պատիւն արատաւորելու։ այս պատճառ մը չէ որ կինը դլուխն առնէ երթայ։ Դժբախտութիւն կրնայ գալ կնոջ դլխուն, առանց իւր պարտաւորութեանց թերացած ըլլալու։ այս պատճառ մը չէ որ այրն ուրիշ կին առնու։ Ամուսնական կապին այս բարձր ըմբռնումին առջեւ, շատ կնճիռք ինքնին կը պարզուին, և կին մը շատ անդամ ճշմարիտ քրիստոնեայ կնոջ պարտաւորութիւնն ի գործ դրած կ'ըլլայ երբ իւր ամուսնոյն հետեւի մինչեւ Սիպերիա, այնպիսի ամուսնոյ մը որ թերեւս միշտ կը սիրէ զինք, որ անչուշտ պէտք ունի իւր սփոփման, եթէ հրեշ մը չէ որ այն ծանր պատժոյն արժանի եղած ըլլայ եղեռնագործութեամբ, մարդասպանութեամբ, բռնաբարութեամբ, գողութեամբ, մծդնեղութեամբ, և այն ամեն ոճիրներով որք բարոյական մարդն իսկ կ'ըսպանեն, ցոյց տալով յիտին անբարոյականութիւն դատապարտելոյն վրայ։ Եթէ այսպիսի հրեշ մ'է դատապարտեալը, կը հանգնանք որ անոր ընկերակցութենէն զղուի կինն, և իւր և զաւակաց պատիւն ու նիւթական և բարոյական ապագայն պաշտպանելու համար, կամ ետ կենայ անոր ետեւէն Սիպերիա երթալէ, կամ նոր ամուսնութեան արտօնութիւն խնդրէ ժամանակ մը ետքն, իբրեւ մեռեալ ամուսնոյ մը սուգը բռնելու ժամանակամիջոցէ մը ետքը։

Բայց եթէ դատապարտութիւնն այնպիսի ընութիւն մ'ունենայ որ Զարը ժամանակ մը ետքը բարեհաճի ներում շնորհել, որով մարդուն վրայ ո՛չ դատական ո՛չ ալ բարոյական արատ մնայ, ի՞նչ պիտի ըլլայ երկան վիճակն, ի՞նչ պիտի ըլլայ կնոջ վիճակն, երբ վերադարձող ամուսինն իւր կնոջ հետ կենակցութիւն խնդրէ, այն կնոջ որ հիմակ օրինաւորապէս պակուեր է ուրիշի մը հետ։ Այս անպատեհութիւն նոյն իսկ ֆրանսայի օրէնսդիրներուն աչքէն չ'վրիպած է։ «Եթէ թէպէտ ամուսնալուծումն իբրեւ օրինական դրութիւն մը կը ճանչնին, բայց դատապարտութեան հետեւանօք ամուսնալուծումը սահմանափակելոյն այն տեսակ դատապարտութեանց միայն որք մարդուն բարոյական վիճակը կ'աղաւաղուին և ընտանեկան անունն իսկ կ'անպատուեն։ Ուրիշ տեսակ դատապարտութեանց մէջ, կինն իրաւունք չունի ամուսնալուծում պահանջելու։ Որչա՞փ աւելի ուրեմն զղջութեամբ վարուիլ պարտի Հայ Եկեղեցին, որ ամուսնալուծումն իբրեւ անխարական լուծում մը չընդունիր ամուսնական վէճերու համար, և իրաւունք ալ ունի չընդունելու։

* * *

Զգիտենք թէ այս Ապարանցի Հայն ո՛վ է, ինչ է, ո՛րպիսի յանցանօք դատապարտուեր է։ Զգիտենք թէ ինչ պատճառ կայ որ կինն անոր հետ Սիպերիա չերթար։ Արդեօք ուրիշ մը կը սիրէր արդէն և այս բարեդէպ դատապարտութիւն առիթ կուտայ իրեն։ Զգիտենք։ Հա՛րկ է ըսել թէ հազարաւոր և բիւրաւոր ընտանիքներ այսօր Սիպերիա կը բնակին, որ հեղհեղեալ զարգացեալ երկիր մը կը դառնայ երկաթուղեայ և այլ հանրօգուտ հաստատութեանց շինութեամբք, և մի քանի տարիէն սկսեալ միայուն նոյն իսկ Փեթերսպուրգի հետ։ Եթէ չենք սխալիր, ռուսական օրէնքն ևս կը թոյլատրէ դատապարտեալներն՝ իրենց կիներն ու զաւակներն ի միասին տանելու։ «Ցաժանակիր աշխատութիւն» ըսուածն ալ Սիպերիոյ պետական հանքերուն մէջ կամ երկաթուղոյն վրայ աշխատութիւնն է, բան մը զոր եւրոպեան երկրաց մէջ օրականով գործաւորներ կը կատարեն, բայց այն աքսորավայրին մէջ աքսորեալներն և զինուորներն աշխատցնել աւելի շահաւոր կը համարուի։ Ինչ և է։

Ռուսական օրէնք

Մեզ կը թուի թէ Սինոդն իրաւունք չունի կրկնամուսնութեան արտօնութիւն տալ հայերու և հայուհիներու այն ամեն պարագայի մէջ ուր ռուսական օրէնքը զանոնք արտօնէ պակին լուծուած համարելու և նորէն կարգուելու։ դի, փա՛ռք Աստուծոյ, տակաւին Հայ Եկեղեցին ռուս Եկեղեցւոյն հետ ձուլուած չէ յամենայնի, որպէս զի իւր ամուսնական օրէնսդրութեանն սկզբունքներ ալ ռուսական օրէնքին այն ինչ հատորէն և այն ինչ մասէն քաղէ։ Իրաւ, շատ մը բաներու մէջ հայկական սովորութիւնները, կանոնները, ձեւերը ռուսացնելու ճիգ մը կ'երեւի նոյն իսկ մեր ազգայնոց մէջ ի Կաւկասիա և ի Ռուսիա, ինչպէս ուրիշ առիթ մը պարզել կը յուսանք։ բայց ամուսնական խնդրոց վրայ Հայ Եկեղեցին իրեն յատուկ ըմբռնումներ ունի, դժկամակութիւններ ունի, որք պարզապէս յատագրական կամ տեսութիւններ չեն։ զի այս խնդիրներ, մարդկային բնութեան ամենէն խորունկ, մարդկային ընկերութեան ամենէն բարձր խնդիրներն, ամենէն լուսաւորեալ ազգաց մէջ, կրօնական նախապաշարմունքներէ ամենէն աւելի ազատագրեալ մտաց մէջ իսկ տակաւին անհամաձայնութեան առարկայ են, և եթէ Կ. Պոլսոյ Պարիարքարանին չափաղանց վեհերոտ և վարանոտ ընթացքը նպատակայարմար չենք գտներ, ու կը քննադատենք, ինչպէս Աբ-եբեր երեկի թերթով, այժմեան Սինոդին ալ ամուսնական ինչ ինչ խնդրոց մէջ հաստեալ որոշումներն ո՛չ ուղիղ բանի համաձայն կը գտնենք, ո՛չ ալ Հայ Եկեղեցւոյ ճշմարիտ շահուց և աւանդութեանց։ Տարբերութիւն մը պէ՞տք է կենայ կաթողիկոս գտնուած և չգտնուած ժամանակներուն մէջ։ Բայց Սինոդն, իւր անվերջ կերպարանափոխութեանց շարքին մէջ, երբեմն այնպէս կը շարժի որ կարծես կաթողիկոսն ինքն իսկ եղած ըլլայ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆԵՍՏՈՐԱԿԱՆՔ. — Ցայսմ է թէ Հէրեւարիի նահանգին մէջ ձուլամերիի կղզիները բնակեալ Նեստորականք, որք Մար Շիմուն Պատրիարքին հոգեւոր իրաւասութեան ենթակայ են, մասնաւոր հասարակութիւն մ'են ուրոյն վարդապետութեամբք, և ժամանակէ մ'ի վեր անկիրան Եկեղեցին անոնց մէջ կրթութիւնն յառաջացնելու համար վարժապետներ և կրօնաւորներ ղրկած է։ Վերջին ժամանակներս լրագրաց մէջ բան մը չենք կարդար այս անկիրան հոգեւոր և կրթական պաշտօնէութեան վրայ, որ բացարձակ կը յայտարարէր թէ Նեստորականներն իրենց դատանութենէն և մասնաւոր Եկեղեցիէն հեռացնելու դիտումի չունի բնաւ։ որովհետեւ Անկիրանք հակառակ են կրօնական տարաձայնութեան (փրոթեսթանտայի)։ Արդ, ի՞նչ կը յուսայք որ պատահած ըլլայ Նեստորականաց մէջ։ Կաթոլիկ անունն թերթի մը, Պոլսէն ֆրանսական թեմին կաթոլիկ պաշտօնաթերթին մէջ կը ծանուցուի թէ Պարսկաստանի պապական պատուիրակ Մոնդէդի գերապայծառին կողմէ տրուած լրոյն նայելով, Նեստորականաց Պատրիարքը Մար Շիմուն կաթոլիկութիւն ընդուներ է։ Մինչեւ ցարդ կրօնափոխ չըլլալուն պատճառն այն է եղեր որ Նեստորականն Պատրիարքութիւնը դարերէ ի վեր կը շարունակուէր կը մնար արդի պարիարքական գերդաստանին մէջ։ Որվայոյ կաթոլիկ քիւրանի արքեպիսկոպոս Թոմաս Անտու գերապայծառն ընդուներ է Մար Շիմունի խոստովանութիւնն յունիս ամսոյ սկիզբն, և յօգտ անտի արքեպիսկոպոսն և ուրի, կաթոլիկ եկեղեցական մը կը շրջին Քրդաստանի լեռները, Նեստորականները դարձի բերելու նպատակաւ։ Այս գէպք մեծ հարուած տուեր է Նեստորական ազանդին։ Պարսկաստանի Նեստորական եպիսկոպոս մը նամակ գրեր է Մոնդէդի եպիսկոպոսին, ծանուցանելով թէ ինքն ևս կը յարի կաթոլիկութեան, և թէ ի մօտոյ ամեն Նեստորականք նոյն բանը պիտի ընեն։ Կաթոլիկ թերթին յորմէ կ'առնուինք այս լուր, գոհ է որ 15 դար տեւեցէն ետեւ «հերետիկոսութիւն» մը մէջտեղէն կը վերնայ։ Եթէ իւր պատմած իրողութիւնք յունիսի սկիզբը տեղի ունեցեր են, զարմանալի է որ ցարդ ուրիշ աւելի իրաղեկ աղբիւրներէ բան մը չէ իմացուած, ուստի պէտք է վերապահութեամբ ընդունիլ։

ԵԳԻՊՏՈՍԻ կառավարութիւնը կը պատրաստուի եղեր զինուորական մեծ արշաւանք մ'ընել Սուտանի կողմերն, և երիտասարդ Խեդիվը, որոյ զինուորական ձիրքերը դեռ ոլեսաիւք կը յիշուին,

—)(114)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԷՄԻԼ ՌԻՇՊՈՒՌ

ՄԱՆՏՐԻՅԵՈՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԹՇՈՒԱՌԱԿԱՆՆԵՐԸ

Նաբաթ օրն ենք։

Քլոթիլտ բաժնուած էր իր կեսուրէն և գացած էր հօրաքրոջը տունն ուր ինք և Բօլ պիտի ընթրէին։

Ժամը երկուք զարկած էր։

Տիկ. Մելվիլ իր պզտիկ սրահին մէջ զբաղած էր քննելով և ճշդելով ձեռագործ մը զոր չինել կուտար իր սենեկապանուհւոյն, տասնեւութ տարեկան մանկամարդ աղջիկ մը արթուն կերպարանքով, շարամիտ աչուքներով և կատակերգութեան ճշմարիտ նաժիշտի մը բոլոր ձեւերովը։

Ցարկին դրան զանգակն հնչուեցաւ։

—Պ. Թիւրկանին կը սպասեմ. ինքն է անշուշտ. Ժիւսթին գացէք ըսէք որ կրնայ ներս մտնել։

Սենեկապանուհին արդէն դուռը բացած էր այցելուին, որ ըսելէ ետք, «Տիկին Մելվիլը տեսնելու կուգամ», առանց վարանելու մտաւ նախասենեակը, ուր գտնուեցաւ Ժիւսթինի զիմացը։

—Պարոնը ի՞նչ կը փափագի, հարցուց սա, հեռաքբրութեամբ այցելուին երեսը նայելով։

—Տիկին Մելվիլն հո՞ս է, հարցուց պարոնը։

Եւ առանց սպասելու մանկամարդ աղջկան պատասխանին.

—Այո, հոս է, յարեց. լաւ ուրեմն, պզտիկ, ծանուցէք իմ գալուստս ձեր տիրուհւոյն։

Ժիւսթին վերաւորուած զգաց ինքզինքը այցելուին համարձակութենէն և մտերմական շեշտէն։ Հասակը տնկեց՝ ադէկ մը ցուցնելու համար թէ ինք «պզտիկ» չէր, և չոր շեշտով յարեց.

—Տիկինին ընդունելութեան օրը չէ այսօր, տիկինը չի կրնար այցելու ընդունիլ։

—Ձիս պիտի ընդունի։

Ժիւսթին, պահ մը ափիբերան եղած, շուտով դառնալ փարիզեան նաժիշտի իր պաղարիւնն։

—Նորէն կ'ըսեմ, պարոն, ըսաւ հաստատ ձայնով, տիկինը մարդ չընդունիր. իր ընդունելութեան օրն հինգշաբթի է, յառաջիկայ շաբթու հրաժեցէք։

Եւ այցելուին առջեւ կեցաւ՝ անոր յառաջացումն արգիլելու յայտնի դիտումով։

—Եւ, նախ, պարոն, յարեց, ո՞վ էք դուք։

—Ա՛հ, անո՞նց պէտք է ձեզ, ըսաւ մարդը յօնքերը պռատելով. լաւ ուրեմն, ես Պ. տը Մելվիլն եմ։

—Հէ՞, ի՞նչ ըսիք։

—Տը Մելվիլ ըսի։

—խե՜նդ է այս մարդը, մտածեց ադախինը։

Եւ բարձրաձայն, գրեթէ լրբօրէն մարդուն երեսը նայելով, ըսաւ.

—Մենք հոս մէկ մ'էկ Մելվիլ միայն կը ճանչնանք. այն է Պ. Բօլ, տիկինին զաւակը։

Մարդուն ակնարկէն փայլակ մը անցաւ և անհամբերութեան շարժումով մը զոր չի ջնանց զսպել։

—Օ՛ն, յարեց ձայնը բարձրացունելով, կը բաւէ այսչափ հարցում և բանակցութիւն. ձեր տիրուհւոյն քով տարէք զիս. Պ. տը Մելվիլն եմ, հնազանդեցէք ձեր տիրոջ։

Աղախինը, ապշաբեկ, երկու քայլ ետ գնաց։ Բայց Տիկ. Մելվիլ լսած և ճանչցած էր ձայնը, այս ձայնը որուն ոչ թթթռումը ոչ շեշտը մոռցած էր։

Երեք օրէ ի վեր, շատ մտածած էր թըշուառականին վրայ. բայց, անոր վրայ խօսելիք չլսելով, ըսած էր ինքնին.

—Զվերծ հմարձակի զիս տեսնելու դալ։

Խաբուած էր, հոն էր ան։

Տժգոյն, զարհուրած, ոտքի կանգնեցաւ. յետոյ, անդիմադրելի կերպիւ քաշուելով, դէպ ի դուռը գնաց, բայաւ զայն կռնակի վրայ և սեմին վրայ յառաջացաւ։

Ինչպէս արդէն ըսած ենք, տը Մելվիլ անճանաչելի եղած էր, և իր կինը պահ մը կարծեց թէ անծանօթի մը դիմացը կը գտնուի. բայց ճանչցաւ զայն նայուածքէն, ինչպէս քիչ մը առաջ ձայնին թրթռումէն։

Մէկդի ընելով սենեկապանուհին, տը Մելվիլ յառաջացաւ դէպի իր կինը։

Պանչ յետս ընկրկեցաւ անոր առջեւ և տը Մելվիլ սրահ մտնելով դուռը գոցեց։

Այն տեղն, խոնարհեցաւ խեղճ կնկան առջեւ, որ բոլոր մարմնովը կը դողար. յետոյ, համարձակ ձայնով մը.

—Տիկին, ըսաւ, կարծեմ թէ չէք սրդոլիր ինձ դէմ առանց կանչուելու հոս ներկայանալուս և զձեզ տեսնել պնդելուս համար, թէեւ այսօր ձեր ընդունելութեան օրը չըլլայ. մնաց որ, յարեց շեշտով մը ուր հեգնութիւն կը նշմարուէր, ես հասարակ այցելու մը չեմ, բացառութիւն մը կրնայ ըլլալ իմ մասս։

Տիկ. Մելվիլ ընկրկած էր մինչեւ չըմինէն և մարմարին կրթնած էր։

Թէեւ կանխագէտ գիտէր, այլ իր ամուսնոյն երեւոյթէն յառաջ եկած ազդեցութիւնը ոչ նուազ չանթահարիչ եղած էր։

Նախ և առաջ խիստ յուզուելով, հակազդեցութիւն մը յառաջ եկած էր յանձին այդ հղօրակազմ կնոջ, որ այնքան անդամներ տուած էր անբաղդաւելի կրքոյի մը ապացոյցը և օրուն հոգին անընդունակ էր քաջալերումներու։

Քիչ քիչ, իր պաղարիւնը վերստացած էր։ Եւ հիմակ, ցուրտ, անդողդոջ, բարձրակրնդ, զայրալից ակնարկ մը կ'արձակէր մարդուն վրայ, որ տասնեւութ տարիներէ ետքն իր առջեւ կ'երեւէր, կարծես հրահրելու համար յինքն այնքան անամօթութեանց յիշատակը։

—Ցանկարձակի եկած էք, տիկին, յարեց տը Մելվիլ, և նոյն իսկ, ձեր երեւոյթէն կը տեսնեմ որ քիչ մը ալ զարհուրած։ Ձեզ համար հոգեգէշ մը եմ, և գուցէ գերեզմանէն փախած ուրուական մը կարծէք զիս։ Օ՛ն, ապահով եղէք, ես ողջ եմ, ողջ առողջ։

«Արդէն, կը հասկնամ ձեր զարմանքը, այնքան փոխուած եմ. . . հապա ի՞նչ գիտցաք, ժամանակին գործն է այս։ Տարիներով քաջելի անդարմանելի նախատինքը։ Բայց հիմա կը ճանչնաք զիս, այս է կարեւորը։

«Թոյլ տուէք որ բոլոր շնորհաւորութիւններս ուղղեմ ձեզ. կ'երեւի թէ տարիներն այնպէս չեն անցած ձեր վրայէն ինչպէս իմ վրայս. հաղիւ կարելի է նշմարել թէ քիչ մը ծերացած էք։ Ճերմակ մազ մը չունիք. այո, միշտ մանկամարդ, միշտ գեղեցիկ։

«Ասիկա կ'ապացուցանէ թէ ձեր կեանքն խիսիս պէս տառապանքի եղած չէ։

«Ամեն բան յաջողեր է ձեզ. իսկ ես անյաջող ելայ իմ ամեն ձեռնարկներուս մէջ. ամեն անգամ որ նաւակս ջուրին երեսն հանել ուզեցի, ընկղմեցաւ։

Տիկ. Մելվիլ անհամբերութեան շարժում մը ունեցաւ զոր չի կրցաւ զսպել։

—Վերջապէս, պարոն, ըսաւ, ի՞նչ կ'ուզէք ինձմէ։

—Հիմա պիտի ըսեմ, տիկին։

«Բայց շատ երկար ոտքի կենալը կը յոգնեցունէ զիս։ Թոյլ կուտաք, այնպէս չէ՞։

Ծանրապէս ինկաւ թիկնաթոռի մը վրայ, յենարանին կրթնեցաւ և սրունքներն երկարեց։

—Կը տեսնէք, տիկին, ըսաւ հեգնօրէն, ուստիս պէս կը վարուիմ։

Տիկ. Մելվիլ արհամարհոտ կերպով ուսերը բարձրացուց։

—Սակայն, յարեց տը Մելվիլ, մարդ հանգիստ կ'ընէ այս թիկնաթոռին մէջ։

—Պարոն, ըսաւ Տիկ. Մելվիլ ցրտօրէն, կը սպասեմ որ յայտնէք ձեր այցելութեան պատճառը։

—Ատուա՞ծ իմ, տիկին, աւելցուց տը Մելվիլ զանգաղ ձայնով, եղական ժպիտ մը շրթանցը վրայ, եկած եմ ձեզ հետ խօսակցելու ձեր գործերուն և քիչ մըն ալ իմիններուս վրայ։

Տիկ. Մելվիլ կանգնեցաւ խրոխտաբար։

—Պարոն, պատասխանեց, դուք բան մը չունիք տեսնելիք իմ գործերուս մէջ։

—Այնպէ՞ս կը կարծէք։

—Բան մը չունիք, պարոն, բա՛ն մը։ Գալով ձերիններուն, անոնք ամենևին չեն հետաքրքրեր զիս։

—Այս վայրկենին կարելի է. բայց ես կ'ուզեմ որ դուք հետաքրքրիք։

Տիկ. Մելվիլ նորէն անհամբերութեան շարժում մը ըրաւ։

—Բայց անսիրտպէս ոտքը տեսնեմ ի՞նչ է ձեր միտքը, դուշց։

—Օ՛հ, զուք բաւական խելացի էք զայն արդէն հասկցած ըլլալու համար։

—Լաւ ուրեմն, ոչ, պարոն, չհասկըցայ, չեմ հասկնար։

(Շարունակելի)

ԹԵՐԹԵՐ

ՀԱՅԿԱՆ

Ինքնասպան լինելու

Ինքնասպանությունը ամենամեծ հանցանքն է, որ գործում է մարդը։

ԱՐԱՐԱՏ, 10 Օգոստոս

ՊՈՂՈՍ ԴՈՒՐԵՆԻՆԻՑ

Գրամաթոմիսն Լեռնային Ղարաբաղի	»	— —
Գ. Գոլենիշչև	»	— —
Ս. Ալիև	»	98 30
Դարձ արջառ	»	101 10
Մեշ. արջառ [ասված]	»	107 30
Իսաակ Թանգամանց	»	9 07
Գրիգոր	»	31 13
Խաչատուր	»	89 30
Մ. Ամիր Դիզակարանի ասվի]	»	107
Ներսիսիանց ասվի	»	110
Հ. Փաշայեանց	»	87 10
Ամենաշնորհ Հիսուս Քրիստոսի դարձի տարեվերջի Հիսուսեան տարեշրջանի՝ Հիսուսեան տարեշրջանի ամենաշնորհ դարձի Ս. Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Գարեգին Բ-ի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Գարեգին Բ-ի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Գարեգին Բ-ի՝		
Ամենաշնորհ Հիսուս Քրիստոսի դարձի տարեվերջի Հիսուսեան տարեշրջան

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

15

ՆՕՐԹՀ ՊՐԻԹԻԾ ԵՒ ՄԷՐՔԸՆԹԱՑԻ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 10,695 969
ՀԱՍՈՅԹ 1891 ՏԱՐԻՈՅ 2,650,872

ՆՕՐԹՀԲԸՆ ԷՖՈՒԲԸՆՍ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 40 69 10
ՀԱՍՈՅԹ 1891 ՏԱՐԻՈՅ 1,076,800

Ընկերութիւնքս Պոլսոյ մէջ ունեցած Միացեալ Գործակալութեան միջոցաւ հրդեհի դէմ ամէն կարգի վտանգաւոր ապահովագրութիւններ ի գործ կը դնեն չափաւոր գնով, և իրենց ցոյց տուած բաւական երաշխաւորութեամբ մեծ գումարներ ապահովագրողաց կրնան վստահաբար զիրենք նոր կապացնել. նաև իբր ապացոյց իրենց հաստատութեան, միայն հրդեհի ճիւղին համար մինչև ցարդ առուած գումարին 20,000,000 Անգլիական Ոսկին կ'անցնի։

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼԻՒԽ Անգլ. Ոսկի, 500,000 — ՄԱՐԻԹԱՅՄ — ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ Անգլ. Ոսկի 110,000

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց մէջի ապրանքներն և դրամածրարներն խիստ օգտակար պայմանաւ։ Գնոց և այլոց վրայ տեղեկութիւն առնուլ ուզողք կը հարցնեն Դիմել Ղալաթիա Մէհմէտ Ալի փաշա խան գ. տնայարկ թիւ 22 և 22 ա. սենեակներն, առ ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈԲԵԱՆ Գործակալ Ն. Պոլսոյ վերոյիշեալ երեք Ընկերութեան

ԻԼԱՆ ՊԱՊԸ ՍԷՐԱՖԷԼԻՐ

Կիրիտ Ֆիրգասընտաքի հայվանաքը միրկէ էչիւն միւպայեա օլունանագ 400 պին գըրէէտէն 500,000 գըրէէէ գատար կիեահրն պէհէր գըրէէսի 13 փարատա Թալիպի էօհտէսինտէ օլուղունտան, ի-Թասրնա Թալիպ օլանլարըն Թարիխը ի-լանտէն պիր հաՖԹաեա գատար մազամը Սէրասքէրի լէվազիմաթ տայիրլսինէ կէլ-էրի։մէլ Նո. 63 3—3

ԱՆՈՒՇԻ ՈՒ ՕՇԱՐԱԿԻ ՍՊԱՍԱՆԵՐ

ԱՆՈՒՇԻ ՍԿԱՀԱԿՆԵՐ, ԴՈՒԼՆԵՐ ՈՒ ՍԿՈՒՏԵՂՆԵՐ

ԴԵՂԱՏԵՐՑ ԵՒ ԶԱՐԴԱՐՈՒՆ

Վերոյգրեալ նիւթերն, արդիւնք տեղացի հայ արհեստաւորաց ճարտարարուեստին, արծաթազօծեալ են հարիւրայոց արծաթով ու նուրբ ճաշակաւ մը պատրաստուած և բուն իսկ արծաթեայ նաօթներէն բնաւ տարբերութիւն չունին։ Փափաքողք կրնան դիմել ի Պոլիս Մեծ Շուկայ Վարագը խան, վարի յարկ, Թիւ 2, Յովսէփ Թօլեանի սենեակը։

ԴԵՂ ՋԵՐՄԻ ԵՒ ՏԵՆԴԻՑ

Տոքթոր Այեբի Ջերմային հիւանդութեան, այս գեղն որ անխառն բաղադրութեան մի է զուտ բուսեղինից, է դասական ազդու կազդուրիչ ամէն տեսակ ֆիզիքական խանգարմանց, որ յառաջ կուգան մարմնոյս վայրերու ջերմտա կլիմայից վատ ու ազականալ օդերէն, որուն օգտակարութիւնն է ապաքինիչ տոգդ յատկութիւնն երաշխաւորել է նորա անհամար արդէնսոյդ տոգդ դիտուած ամէն։ Այս ֆիզիքական խանդարումներէն նաև կուգան օդին մէջ լողացող թունաւոր մանրէներուն նիւթոց միջոցաւ, որք թոքերէն անցնելով կը մտնեն արեան մէջ, կը խանգարին լեարդն, և յառաջ կը բերին տեսակ տեսակ ցաւերք և անդեղք, և արեան թունաւորումն։ որոց սա անուններքը լրացած է։ ջերմն և տարուա, թաքուն ջերմ զարբեբական ջերմն, ընդհանրապէս ջերմն մազձային անդ և հրատապ անդեր։

Թունաւորեալ օդերէ զատճառեալ հիւանդութիւնք կը պատահին այն տեղեր ուր մարդոյքն ազականալ և թունաւորեալ է հանգիստներէ կամ մարմնոյս ուրիշ վայրերէ մահացած նիւթ լալ, կամ բաց աղբանոցներէ և ակամներու ծակոտիներէն ելած թունաւոր կազբով, զոր մարդիկ կը ծծեն ընշաւութեամբ։

Այսերի ջերմն ու անդերդ գեղը կը ջնջէ այդ գումնաւոր նիւթոց կամ կազբու ազդեցութիւնն գուցը կը գանէ զայն մարմնոյն մէջէն, որոյ գործ ածութիւնն սուսգապէս անվնասդ է և անվնաս է և օգտակ ստոյգ, միայն թէ տրուած հրամանքի համեմատ գործածուի։ կը ծախուի Մինասեան և ընկերաց Ամերիկեան վաճառատան մէջ ի Գալաթիա Կ. Պոլսոյ։ 29

Արտօնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՔԱՆԵԼՔ ԼՊՐԱՏՈՒ

ՔԻՐԽՆԵՐ ԵՒ ԸՆԿ. ԳՈՐԾԱՐԱՆ ՄԵՔԵՆԱՑԻՑ

Ի ԼԱՅՓՑԻԿ—ՍԵԼԼԸՐ ՀԱՌՈՒՑԷՆ

Կը շինեն Յոգոսլ Մանուֆէքտորիէմբ

ՄՂՈՑ ՄԵՔԵՆԱՑՆԵՐ ԵՒ ԳՈՐԾԻ ՄԵՔԵՆԱՆԵՐ ՓԱՑՑ ՏԱՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՒՂՂԱՋԻԳ ՄՂՈՑ

ՇՐՋԱՆԱՁԵՒ ՄՂՈՑ
Մեքենայք՝ ատաղձարանաց համար, կահկարասիի գործարանք, դրամարկղի գործարանք, սղոց մեքենայք, երկաթուղեայց մեքենայք, ևն. ևն.
Գործարանը 22,000 է աւելի մեքենայ մատակարարած է։



ՓՈՑՏ ՑՂԿԵԼՈՒ ՄԵՔԵՆԱՑ
Ամենարարմար ատոիճաններ և ոսկիէ չքադրամներ, Անվէրա 1885, Բօրթօ Ալեկրօ 1881, Թուվար 1891, Միւնիխ 1888, Պերլին 1889։
Աշխարհի ամենէն մեծ գործարանը։

Էրնէսթ Քիրխները և ընկ. Կ. Պոլիս, Գալաթիա, Սելանիկ խան Թիւ 13 ընդ տբ-նորինութեամբ Ճարտարապետ Պ. Սրբինկհօլայի։ 101

ՖԷՐՆԷԴ—ՊՐԱՆԳԱ

Մասնաւոր բաղադրութիւն Միլանի Պրանգա եղբարց
Մատակարարք Իտալիոյ Արքայական Տան

Ոսկեայ չքադրամ՝ Բարիզի 1889ի Տիեզերական Արուեստահանդիսին մէջ։

Քան տարուան յաջողութիւն Լիսաբոն, Լիմերիկ, Ի Հնդկաստան, Մարսէլիա և Սիդիպոս —Շքադրամ 1885ի Անվերսայի, 1884ի Թուրին, 1883ի Նիսի, 1881ի Միլանի, 1888ի Մելպուրնի և Պրոմէլի, 1879ի Սիտնէյի, 1878ի Բարիզի, 1876ի Ֆիլատէլֆիոյ, 1873ի Վիեննայի մի ջազգային ցուցահանդէսներուն մէջը։

ՖԷՐՆԷԴ-ՊՐԱՆԳԱ առողջապահական ամենէն ծանօթ պիգերն է։—Շատ բժիշկներէ կը յանձնարարուի իբր զգուշական գործմանական ճախարկին երկիրներու տեղերու, տարափոխիկ հիւանդութեանց և քոլերայի։

ՖԷՐՆԷԴ-ՊՐԱՆԳԱՆ կը գիւրացնէ մորսողութիւնը, կը հանդարտեցնէ ծարաւը, կը գրգռէ ախորժակը, կը բուժէ գլխու ցաւը, գլխու պտոյտը, ջղային ցաւն և մելամաղձութիւնը։

Այս ըմպելիք, բոլոր ծանօթ պիդերներէն և ամէնէնէն գերազանց, կ'առնուի ամէն օր ճաշէն առաջ իբր ախորժարար։ Ջուրէն յուսոյ, ազդու մարսողական է։ կարելի է խառնել զանց վերմութի, գինիի, Սեւլի ջրոյ և խաղողի հեա.

ՖԷՐՆԷԴ-ՊՐԱՆԳԱՆ, ինչպես և Նդն տան վերմութը, կը գտնուի գլխաւոր անուշաբարաց, Նպարավաճառաց և գինեվաճառաց քով։

Թուրքիոյ համար կեդրոնատեղին է ՊՈՆՈՊԻ և ՐԼԳՔԻԱ 2218

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՄԵԾ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ

Բերուի քաջայով չինուած ՄԱՌԵԱՆԻ ԳԻՆԻՆ պնդացուցիչ և գրգռիչ դեղերուն ամենէն ազդուն է, գերընտիր վերանորոգիչ մարսողութեան և շնչառութեան գործարանաց, ձգտող ձայնական լարերու։ Գինիքինայն նախամեծար է որուն ջերմացուցիչ յատկութիւնները չունին, անարիւնութեան դէմ գործածուող դեղերուն մէջ ամենէն գերազանցն է։ Իւր քաղցր համով ընդունուած է իբր ազանդերի գինի և այսպէս, հաճոյալի ձեւոյ մը ներքեւ, ոյժ և առողջութիւն կուտայ։ Իր բժշկէ երիկմարդոց ԱՆԿԱՐՈՂՈՒԹԻՒՆը և ամենէ տկար անձանց կուտայ կորով և աշխոյժ։ ԹՈՄԱՌԵԱՆԻ, քաջայի առպին ծաւալիչը, Գուլվառ հոսման, 41, Բարիզ։ Թուրքիոյ բոլոր դեղարաններու և դեղագործական մթերանոցներու մէջը կը գտնուի։

COMP RUSSE

DE NAVIGATION A VAPEUR ET DE COMMERCE

ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈՓԵՆԱՒԱՑԻՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Շաբթուան երեքեւկուրիւնք

Բշ. 27 8 Օսեսայի ուրբհանգակ, ժամ 2ին յետմիջօրէի։
Գշ. 23/9 Աւէքսանդրիոյ ուղղակի ուրբհանգակ, ժամ 5ին յետ միջօրէի. Պիրէեսի ճամբով
Դշ. 29/10 Սեվաստոպոլի ուրբհանգակ, սաւառնան ժամ 10ին։
Դշ. 29.10 Ուրբհանգակ գեղի փոքր Ասիոյ Նաւահանգիստները մինչեւ պաթում. սաւառնան ժամը 11ին։
Եշ. 30.11 Օսեսայի ուրբհանգակ, ժամ 2ին յետ միջօրէի։

Ազգ.—Յուլիս 29/10, երեքշաբթի օրը կ պոլսէն գեղի Սուրիոյ նաւահանգիստները մեկնող ուղեորը Զմիւռնիոյ մէջ պիտի հանգիստն Թրիբոլի, Պէյրութ, Յաֆա, և Բոր-Սայիտ գացող շոգենաւին։ 12

ՔԻՒՆԱՐՏ (CUNARD)

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՇՈՓԵՆԱՒՈՒՑ

Ուր ուրաք երթաս անիկա կը բանին Լիվերփուլ և Աբէ-Եէլէյ գիրը։

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ումբրիա	7718	Գոգաստանիա	4845
Եդրուբիա	7715	Պարթիա	4531
Սերվիա	7391	Սամարիա	5574
Ուրանիա	7208	Մարաթոն	2408
Բաւարիա	5587	Գալլոս	2393
Սկիթիանիա	5517	Պարակոսա	2166
Կալլիա	4809	Թարիֆա	2246
Սիթիա	4557	Բարիքա	2144
Ալէքսս	2,438	Թրինիտատ	599
Քեսարիա	1876	Մարոգոս	1355
Նեբրասկա	1614		

«Թրինիտատ» շոգենաւ, նաւապետ Ուսլդվէն, ուղղակի Լիվերբուլէն կը մեկնի դէպ ի 13 ամսոյս։

«Նէբրասկա» շոգենաւը Լիվերբուլէն ատ կը սպասուի դէպի ամսոյս 23։

Դիմել առ ԹՈՄԱՍ Զ. ՃՈՒԼ Գլխաւոր Thomas C. Joly
Ալիքսանդրիա խան, Թիւ 11 Գալաթիա
17

ՀՈՏԵՂԻՆԱՑ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՏԻԱՖԱՆ

Կ. ՄԱՌԶԻՒՑԼՈՒ ԵՒ ԸՆԿ.

ՓԱՐԻԶ — 32, Օբերէայի ճաւուղին, 32 — ՓԱՐԻԶ
ՀՌԱՉԱԿԱՒՈՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ

ՏԻԱՖԱՆ

ՓՈՒՏՐԱ, ՄԱՌԱ, ՊԼՈՒՆԱՐ

Ռուսական Օ տը Ֆոլոնը
Ա. լա Բօ Տէնբանեի Ջուր
Ֆիտորա անուշահոտութիւնք
Աճառք, էքսթրէ, արդուզարդի ջուր, և այլն
Ռիէժանի անուշահոտութիւնք
Սառա Պէռնար
Տիաֆան կաթ Իռիսի
Կը վաճառուի հոտեղինաց ամէն ազէկ վաճառատանց մէջ։

ՄՈՍ

ՇՈՓԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Լիվերբուլ և Մէնչեսթր-ով ամէն եռանդ ընթացք

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Քանադա	4200	Սիթիա	3000
Տերու	4000	Գոպրէա	3000
Օսմանլի	4000	Նէրթիս	3000
Սէքսոգրէս	3250	Սէրա	3000
Իրա	3250	Լոգիս	800
Մակասլա	3250	Ալթամա	800
Պարիսթիա	3250	Սէսիլ	700

Նէրէս չոգենաւը օգոստոս 2ին Լիվերբուլէն ասա կրպասուի։

Դիմել առ Ժ. Ղ. ՊԻՊՕԼ և ԸՆԿ.
Ուիթոլ խան
ՃԼԵՑՄՍ ՄՈՍ և ԸՆԿ.
34, Ֆլիտ Սթրիդ Լիվերբուլ

Royal Windsor

ՀՌԱՉԱԿԱՒՈՐ ՎԵՐԱՆՈՐՈԳԻՉ ՄԱԶԵՐՈՒՆ

Սպիտակ մազեր ունիք, մազերնիդ կը թափի՞ն, մազերու արմատները թուլցած են կամ կը թափին։ եթէ ունիք այդ տեսակ բաներ գործածեցէք Ռոյալ Վինտզոր։ դեղը, որովհետեւ այս դեղ երիտասարդութեան ատենին պէս, բնական գոյն մը ու գեղեցկութիւն մ'կուտայ սպիտակ մազերուն և կ'արգելու մազերու թափիլն։ այլն։ Այս դեղ, օրուն տերը չքադրամի արժանացած է. մազերու միակ վերանորոգիչն է։ Անյուսալի արդիւնքներ առաջ բերելով, վաճառումն օրէ օր աւելնալու վրայ է։ Փափաքողաց սրբի գրկուի մանրամասնութիւններ ու վկայութիւններ պարունակող ծանուցումն առանց որ և է ծախքի։ Այս դեղ կը վաճառուի գլխաւորաբար վարսավիրներու և դեղագործներու քով։

Վիկտորիի վարդի սպեղանին երեսի գոյնը կը գեղեցկացնէ։ Այս եւս կը ծախուի Ռոյալ Վինտզորի ծանուած տեղերը։

ՇՈՓԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՈՒԵԱՆ

Ն. ԲԱՌԷ ԵՒ ԸՆԿ.

Թարգմանի և Պոստոգ գլխ. կանոնագրքոյ Քանոյ

Բարիզ Լիոն-Մարսիլիոյ երկաթուղեայց ուղեւորութիւնն ի միասին առնով,
Ա. կարգ 245 Ֆրանք
Բ. » 175 »
Ուղղակի և արագ ապարանքներ

Նաւագնացի, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատար
ԹԻՄՈԹԷ ԲԼՊՈՒԼ
Մոմճանէ Սիթէ Ֆրան մէջ
5

ԱՐԵՒԵԼ ԵԱՆ — **ԵՐԿԱԹՈՒՂԻՔ**

ԵՐԹԵԻ ԵԿՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՄԷՋ Կ. ՊՈԼՍՈՅ ԵՒ ՔԻՒԶԻՒՔ—ՕԼՓԷՃԷ

Սկսեալ ի 1 Մայիս (Ն. Տ.) 1892, մինչեւ յետոյ տեսորինութիւն

Կ. ՊՈԼՍԷՆ ՔԻՒԶԻՒՔ—ՕԼՓԷՃԷ

ԹՈՒՆԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԱՆՈՅ

	8	10	62	12	14	16	18	20	22	24	26	28	30	32	34	36	38	40	42	44	46	48	50	52	54	56
	Առաւօտ																	Իրիկուն								
	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.
Կ. Պոլիս	6 00		6 30		7 00	7 45	8 35	9		9 30	10		10 30	11		11 30	12		1 30	2		2 30	3		4		4 30
Գալատա	6 09		6 41		7 09	7 55	8 45	9	9	9 39	10	9	10 39	11	9	11 42	12	9	1 39	2	9	2 39	3	9	4 09	4	39
Լէնի—գաղու.	6 13				7 13	7 59	8 49	9	13	9 43	10	13	10 43	11	13	11 46	12	13	1 43	2	12	2 43	3	13	4 13	4	43
Տաուա փաշա	...		...		...	...	...			...	...		...	...		...	...		...	...		...	...		...	...	
Սամաթիա	...		...		7 18	8 05	8 55	9	18	9 49	10	18	10 49	11	19	11 52	12	19	1 49	2	17	2	9	3	19	4	19
Լէնի—գաղու.	6 23		6 53		7 21	8 10	8 59	9	20	9 53	10	20	10 53	11	23	12 09	12	22	1 53	2	20	2 54	3	23	4	23
Մաղրիգլու	6 33		7 07	7	12	7 32	8 21	9	10	...	10	1	...	11	4	11 34	12	19	...	2	01	...	3	03	3	33
Ա. Մէհէնտաս	...		...	7	26	7 41	8 30	9	19	...	10	13	...	11	13	11 44	...	...	...	2	13	...	...	3	47	...	
Քեւչիւք Չէք.	...		...	7	36	...	...	...		...	...		...	...		11 53	...	...	...	...		...	...		...	...	

	4	40	5	10	5	30	5	48	6	19	6	49	7	19	7	68	8	04
Կ. Պոլիս	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
Գալատա	4	45	5	15	5	43	6	13	6	43	7	13	...	7	58	...	...	...
Լէնի—գաղու.	5	03	5	33	6	03	6	33	7	03	7	33	...	...	...	...	...	...
Տաուա փաշա	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
Սամաթիա	5	19	5	48	6	19	6	48	7	19	7	68	8	04	...	...	...	...
Լէնի—գաղու.	5	23	5	50	6	23	6	52	7	23	...	8	07	...	...	...	...	...
Մաղրիգլու	5	33	...	...	6	34	...	...	7	34	8	09	...	...	...	...	...	...
Ա. Մէհէնտաս	...	...	...	...	6	43	...	...	7	44	8	18	...	...	...	...	...	...
Քեւչիւք Չէք.	...	...	...	...	...	...	...	...	7	53	...	...	...	...	...	...	...	...

ՔԻՒԶԻՒՔ—ՕԼՓԷՃԷՆ Կ. ՊՈԼԻՍ

ԹՈՒՆԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԱՆՈՅ

	9	11	13	15	17	19	21	23	25	27	29	31	33	35	37	39	41	43	45	47	49	51	53	55	61	57
	Առաւօտ																	Իրիկուն								
	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.	ժ.	ր.
Քեւչիւք Չէք.	...	...	6	48	...	...	...	...	...	...	...	...	12	45	...	...	...	...	...	...	...	...	...	7	07	...
Ա. Մէհէնտաս	6	...	...	6	57	...	8	06	8	36	...	9	30	...	...	10	30	11	25	...	...	12	57	...	...	...
Մաղրիգլու	6	0	6	40	7	07	7	31	8	20	8	46	...	9	40	...	10	40	11	10	12	41	1	1	...	...
Լէնի—գաղու.	6	22	6	52	7	20	7	42	8	32	8	58	9	25	9	52	10	25	10	52	11	5	12	2	1	22
Սամաթիա	6	26	6	56	7	24	7	46	8	36	9	0	9	28	9	56	10	28	10	56	11	58	12	56	1	26
Տաուա փաշա	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
Լէնի—գաղու.	6	32	7	02	7	30	7	52	8	42	9	07	9	34	10	02	10	34	11	02	12	01	1	02	1	3
Մաղրիգլու	6	39	7	08	7	34	7	56	8	46	9	10	9	38	10	08	10	38	11	08	12	08	1	08	1	38
Կ. Պոլիս	6	47	7	16	7	42	8	04	8	54	9	18	9	46	10	16	10	46	11	16	12	16	1	16	1	46

	2	02	2	34	3	02	3	32	4	32	5	02	5	32	6	04	6	32	7	06	7	48	...	...
Կ. Պոլիս	2	16	2	46	3	16	3	46	4	46	5	16	5	46	6	16	6	46	7	18	8	01	8	32

ուրբ ծարքերն անխոնջ կ'ընդունուին. ամէն կառախմբի մէջ, իսկ մեծ ծարքը Պոլսէն Մարբիգլիս կամ Սալի հեռի կայարանաց մէջն գտնող կառախմբոյ մէջ ... Գնուռնուին։ 17

ԼԻՒՆԻՕՆ L'UNION

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ

Հաստատեալ ի Փարիզ, իւր կեդրոնավայրն, Պանք փողոց, 15

ՎԱՐՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ 33

ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ
ԻՄՆԵԱԼ 1828ԻՆ

Դրամագլուխը	Ֆր. 10,000,000
Պահեստի դրամ	» 6,700,000
Գանձելի ապահովագին (Բոնմ)	» 63,770,000
1890ի հասոյթք	» 15,000,000
Հրդեհի վնասուց վճարուած	» 160,570,000

Պ. Պ.
Ա. Տ'ԷՅՇԹԱԼ, ... քարի երեսփոխան, Նախկին վարիչ Ֆրանսական Պանքայի, Նախագահ Ֆրանսայի Հաբաւային երկաթուղեայց ընկերութեան, ՆԱԽԱԳԱՀ
Ս. ՄԱԼԷ, Մայէ եղբարց Դրամատունէն, Նախագահ «Բարի-Լիոն-Մէտիթերրանէ» ԵՐ կաթուղեայց ընկերութեան, Նախագահ Օսմ. կայս. Պանքայի, ԴԵՐ-ՆԱԽԱԳԱՀ
ԻՒՆԻՈՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ։
Թ. ՕՏԷՈՒ, Նախկին դրամատեր, Նախագահ Վիէյլ Մոնթանեի և Էքլինաքի անխահանաց ընկերութեան։
Ս. ՀԻՐՍԼԷ, Նախագահ Մէրլիւզինի Ծովային Ապահովագրական ընկերութեան։
ՀՐԴԵՀԻ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ) Պ. Պ. ՇԱՒԼԸ ՌՕՊԼԷ. Նախկին պետական խորհրդական, ՏՆՕՐԻՆ
Պառն Ժ. ՍԸՌԻՋ, Նախկին երլմական քանի, ԴԵՐ-ՏՆՕՐԻՆ

Պ. Պ.
Ս. ՀԷՅՇՍԸՆ, Հօթենկէր և Ընկ. դրամատեարց տունէն։
Ֆ. ՄԻՇՕ, Նախկին Նախագահ Սենի Առեւտրական Դատարանին, վարիչ Ֆրանսական Պանքայի, վարիչ Ֆրանսայի Հիւսիսային երկաթուղւոյն։
Հ. ՄԻՐԱՊՕ, Միրապօ Բաքար, Բիւրարի և Ընկ. դրամատեարց տունէն։
Ա. ԹԻԹԵՆԷՅՍԸՆ, Լանտի երկաթուղեայց Ընկերութեան վարիչ։
Ա. ՎԷՐՆ, Վէրն և Ընկ. դրամատեարց տունէն, վարիչ Ֆրանսական պանքայի, տեսուչ Ֆրանսայի Հիւսիսային երկաթուղեայց ընկերութեան, վարիչ Օսմ. պանքային։
ԿԵՆԱՑ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ) Պ. Պ. ԱԼՊԻՐ ՖՈՒՌ, Տնօրէն
ԷՕԺԵՆ ԼԸՍԷՆ, Դեր-Տնօրէն

ԿԵՆԱՑ ՃԻՒՂ
ԻՄՆԵԱԼ 1829ԻՆ

Դրամագլուխը	Ֆր. 10,000,000
Պահեստի դրամ.	» 93,8
Կենաց համար վճարուած	» 59,000,000
Ապահովագրեալ գումարը	» 243,580,000

Ընկերութեան դրամատեարք ի Կ. Պոլիս. ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱ

Մանրամասն տեղեկութեանց համար դիմել առ Մասնաւոր Տնօրէնն Կ. Պոլսոյ, ՍԻՄՈՆ ՔԱՅՍԷՐԼԵԱՆ, կալաթա, Մահմուտիէ փողոց, Քամանտօ Պանգայի դիմաց, Երամեան խան, Թիւ 2